Համաշխարհային տնտեսական համաժողովի
«Համաշխարհային առևտրի խթանման 2010թ. ինդեքս»

Համաշխարհային տնտեսական համաժողովը հրապարակել է **«Համաշխարհային առևտրի խթանման զեկույց 2010»**-ը (Global Enabling Trade Report-2010) [1], որում ներկայացվում է համաշխարհային առևտրի խթանման համեմատական վերլուծությունը աշխարհի 125 երկրների, այդ թվում նաև Հայաստանի համար:

Նշված ինդեքսը գնահատում է երկրների սահմաններով ապրանքների ազատ հոսքերի հեշտացմանը նպաստող գործոնների, քաղաքականությունների և ծառայությունների առկայությունը երկրներում: Ինդեքսը հաշվարկելիս դիտարկվում են 4 ոլորտներ՝ իրենց բաղկացուցիչ 9 հենասյուներով՝

I. **Շուկայի մատչելիությունը**
   - տեղական և օտարերկրյա շուկաների մատչելիությունը

II. **Մաքսային վարչարարությունը**
   - մաքսային վարչարարության արդյունավետությունը
   - ներմուծման-արտահանման գործընթացների արդյունավետությունը
   - մաքսային վարչարարության թափանցիկությունը

III. **Տրանսպորտի և կապի ենթակառույցները**
   - տրանսպորտի ենթակառույցների մատչելիությունն ու որակը
   - տրանսպորտային ծառայությունների մատչելիությունն ու որակը
   - տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիությունն ու օգտագործումը

IV. **Բիզնես միջավայրը**
   - կանոնակարգումների միջավայրը
   - ֆիզիկական անվտանգությունը:

Նշված 4 ոլորտների բաղկացուցիչ մասերը կազմող 9 հենասյուներից յուրաքանչյուրի գծով հաշվարկվել են ենթաինդեքսներ՝ 7 բալային համակարգով, որում «7» գնահատականը համապատասխանում է միջազգային առևտրում ամենից ազատ, իսկ «1» գնահատականը՝ ամենից սահմանափակ երկրի վիճակին: Հենասյուների գնահատականների պարզ միջին թվաբանականի կիրառմամբ ստացվել են 4 ոլորտներից յուրաքանչյուրի ինդեքսը (ենթաինդեքսը), իսկ վերջիններիս միջինի հիման վրա՝ համընդհանուր՝ «Համաշխարհային առևտրի խթանման» ինդեքսը:

Նկատենք, որ «Համաշխարհային առևտրի խթանման 2010 թ. զեկույցը» Համաշխարհային տնտեսական համաժողովը հրապարակում է երրորդ անգամ: 2008թ.-ի զեկույցում ընդգրկվել էին

[1] **Տե՛ս** The Global Enabling Trade Report 2010//World Economic Forum 2010: <http://www.weforum.org/pdf/GETR10/Global-Enabling-Trade-Report-2010.pdf>:

118 երկրներ, 2009թ.-ի զեկույցում՝ 121 երկրներ, իսկ 2010թ.-ին ավելացել են 5 երկիր (Իսլանդիան, Վրաստանը, Մոնտենեգրոն, Սերբիան, Բոթսվանա) և գնահատումից դուրս է մնացել 1 երկիր (Մոլդովան), այսինքն՝ 2010 թ. զեկույցում ընդգրկվել են 125 երկրներ: Նշենք, որ համաշխարհային առևտրի բացվածության և ներդրումների ներգրավման առաջին տասնյակում են Սինգապուրը, Հոնգկոնգը, Դանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Կանադան, Լյուքսեմբուրգը և Նիդերլանդները, իսկ վերջին տասնյակում են՝ Մոնղոլիան, Մավրիտանիան, Նեպալը, Ալժիրը, Նիգերիան, Վենեսուելան, Զիմբաբվեն, Կոտ դ'Իվուարը, Չադը և Բուրունդին:

Համաշխարհային առևտրի խթանման 2010թ. ինդեքսի գնահատման հիմքում ընկած են 2009թ.-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի տվյալները:

Հայաստանի գնահատականները. Համաշխարհային առևտրի խթանման Հայաստանի 2010թ. գնահատականը 2009թ.-ի համեմատ զգալիորեն բարելավվել է: Մասնավորապես, եթե Հայաստանը այս ինդեքսի գծով 2009թ.-ին աշխարհի 121 երկրների թվում գրավում էր 64-րդ տեղը (3.81 միավոր), ապա 2010թ.-ին աշխարհի 125 երկրների թվում գրավել է 52-րդ տեղը (4.2 միավոր): Ընդ որում, էապես բարելավվել է **շուկայի մատչելիության** գնահատականը, համաձայն որի Հայաստանը գրավում է 5-րդ տեղը՝ նախորդ տարվա 42-րդ տեղի համեմատ: 2009թ. համեմատ բարելավվել են նաև **մաքսային վարչարարության** և **տրանսպորտի ու հեռահաղորդակցության ենթակառույցների** գնահատականները (աղ. 1-2): Այս բնագավառում որպես Հայաստանի տնտեսության դրական ոլորտներ Համաժողովը նշում է տրանսպորտի ոլորտում Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (GATS) շրջանակում երկրի ստանձնած պարտավորությունները, թիրախային արտաքին շուկաներում ՀՀ արտահանման/ներմուծման նկատմամբ այլ երկրների կողմից կիրառվող ոչ խտրական մաքսային դրույքաչափերը, օտարերկրյա աշխատուժի ներգրավման դյուրինությունը, մաքսատուրքով չհարկվող ներմուծումների տեսակարար կշիռը և այլն: Համաշխարհային առևտրի խթանման ոլորտում որպես Հայաստանի տնտեսության թույլ կողմեր Համաժողովն առանձնացնում է տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքները, մաքսային ընթացակարգերի բեռը, արտահանման և ներմուծման ոլորտում անօրինական վճարումները, միջազգային բեռնափոխադրումների իրականացման դժվարությունն ու ոչ մատչելիությունը, դատական համակարգում և պետական պաշտոնյաների շրջանում անօրինական ազդեցությունները (միջամտությունները), մաքսազերծման ընթացակարգերի ցածր արդյունավետությունը և այլն (աղ. 3):

Հարկ ենք համարում հատկապես ներկայացնել **«Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքներ»** ցուցանիշի գնահատման մեթոդաբանությունը, քանի որ այս ցուցանիշի գծով Հայաստանը գրավում է ամենավերջին՝ 125-րդ տեղը դիտարկված երկրների թվում: «Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքներ» ցուցանիշը Հայաստանի համար ստանալու նպատակով, նախ, հաշվարկվել է «0» կամ «10» տոկոս մաքսային դրույքաչափեր ունեցող ներմուծվող և արտահանվող բոլոր ապրանքատեսակների գծով 2009թ.-ի միջին մաքսադրույքը (ստացվել է 1.88%): Այնուհետև, ըստ մեթոդաբանության, վերցրել են միջին դրույքաչափի 3-ապատիկը՝ 5.64% և հաշվել այն բոլոր ապրանքատեսակների թիվը, որոնց դրույքաչափերը գերազանցում են 5.64%-ը (Հայաստանի դեպքում նման, այսինքն՝ 10%

դրույքաչափեր ունեցող ապրանքատեսակների թիվը կազմել է 98): Հաջորդ քայլում, հաշվարկել են 5.64%-ը գերազանցող ապրանքատեսակների տեսակարար կշիռը ներմուծվող և արտահանվող ապրանքատեսակների ընդհանուր թվում: Նկատենք, որ որքան մեծ է այդ տեսակարար կշիռը (Հայաստանի դեպքում ստացվել է 27%), այնքան ցածր է երկրի գնահատականը (ինդեքսը) և տեղը այս ցուցանիշի գծով:

Միջազգային առևտրի խթանման ոլորտում Հայաստանի 2010թ., 2009թ. և 2008թ. ինդեքսների բաղկացուցիչ մաս կազմող 4 ոլորտների ենթաինդեքսների և 9 առանձին հենասյուների գնահատականների համեմատությունը, միջազգային առևտրի բնագավառում Հայաստանի զարգացումները, համեմատական առավելություններն ու թույլ կողմերը ներկայացվում են աղյուսակներ 1-3:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում.</u> Հարավ-կովկասյան տարածաշրջանի առումով նշենք, որ Վրաստանի համար Համաժողովը «Համաշխարհային առևտրի խթանման» ինդեքս սկսել է գնահատել միայն 2010թ.-ից և ներկայումս այս ինդեքսով Վրաստանը աշխարհի 125 երկրների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը, իսկ Ադրբեջանը 2010թ.-ին գրանցել է զգալի հետընթաց և աշխարհի 125 երկրների շարքում գրավում է 77-րդ տեղը: Ընդ որում, նկատենք, որ եթե Հայաստանը Ադրբեջանին գերազանցում է շուկայի մատչելիության, մաքսային վարչարարության, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտների գնահատականներով, Վրաստանին զիջում է համաշխարհային առևտրի խթանման բաղկացուցիչ մաս կազմող բոլոր 4 ոլորտների գնահատականներով:

Համաշխարհային առևտրի խթանման 2010 թ. գնահատականներով Հայաստանը նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է մերձբալթյան երկրներին և Վրաստանին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանը գերազանցում է Ռումինիային, Մակեդոնիային, Լեհաստանին, Ալբանիային, Սերբիային, Բուլղարիային և Բոսնիա-Հերցեգովինային: Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ինդեքսները՝ իրենց համապատասխան գնահատականներով և դրանց հաշվարկման ընթացքում առանձնացված ոլորտների ենթաինդեքսներով ներկայացվում են աղյուսակներ 4-8-ում:

Հայաստանի համաշխարհային առևտրի խթանման գնահատականներն ըստ ոլորտների՝
գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից

Աղյուսակ 1.

	Ինդեքսի անվանումը	2010 թ. դիրքը (աշխարհի 125 երկրների շարքում)	2009 թ. դիրքը (աշխարհի 121 երկրների շարքում)	2008թ. դիրքը (աշխարհի 118 երկրների շարքում)
	Համաշխարհային առևտրի խթանման ինդեքս	*52*	*64*	*61*
1.	Շուկայի մատչելիություն	9	42	43
2.	Մաքսային վարչարարություն	84	87	87
3.	Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառույցներ	60	61	77
4.	Գործարար միջավայր	65	64	53

Հայաստանի համաշխարհային առևտրի խթանման գնահատականները ըստ 9 հենասյուների՝ ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2010թ. գնահատականների

Աղյուսակ 2.

	ԵՆԹԱԻՆԴԵՔՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2010թ. դիրքը աշխարհի 125 երկրների շարքում/ գնահատականը	2009թ. դիրքը աշխարհի 121 երկրների շարքում/ գնահատականը	2008թ. դիրքը աշխարհի 118 երկրների շարքում/ գնահատականը
1.	**ՏԵՂԱԿԱՆ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**9/5.3**	**42/4.2**	**43/4.7**
1.01	Մաքսային խոչընդոտներ (առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույք)	33/2.2	109/13.6	36/3.3
	Մաքսային խոչընդոտներ ոչ գյուղատնտեսական արտադրանքի գծով	--	37/2.1	--
	Մաքսային խոչընդոտներ գյուղատնտեսական արտադրանքի գծով	--	121/83.4	--
1.02	Ոչ մաքսային խոչընդոտներ 0-100 (լավագույնը)	n/a	n/a	n/a
1.03	Մաքսային դրույքների բարդությունը 1-7 (լավագույնը)	72/5.1	69/5.4	--
	Մաքսային դրույքների ցրվածքը	73/9.2	119/59.4	--
	Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքները	125/27.0	33/0.4	--
	Հատուկ մաքսային դրույքների քանակը	64/0.5	54/0.5	--
	Ներմուծման նկատմամբ կիրառվող առանձնահատուկ (distinct) մաքսային դրույքների քանակը	58/32	57/32	--
1.04	Մաքսերից ազատված (duty-free) ներմուծման տեսակարար կշիռը	28/72.5	21/74	36/79
1.05	Կիրառվող միջին մաքսային դրույքը	45/5.4	88/5.6	--
1.06	Թիրախային շուկաներում նախապատվությունների մարժան 0-100 (լավագույնը)	5/81.6	10/70.3	--
2.	**ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**76/3.9**	**64/3.5**	**103/2.6**
2.01	Մաքսային գործընթացների բեռը 1- 7 (լավագույնը)	123/2.7	111/2.7	110/2.6
2.02	Մաքսային ծառայությունների ինդեքս 0-12 (լավագույնը)	39/8.5	38/7.5	80/3.8
3.	**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ/ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**89/4.1**	**99/3.6**	**74/4.2**
3.01	Մաքսազերծման արդյունավետությունը 1-5 (լավագույնը)	109/2.1	101/2.1	98/2.1
3.02	Ներմուծման վրա ծախսվող օրերի թիվը	64/20	74/24	69/2.4

3.03	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերը, քանակ	50/7	85/9	59/8
3.04	Ներմուծման ծախքը (ԱՄՆ դոլար)	107/2096	101/1981	81/1335
3.05	Արտահանման վրա ծախսվող օրերի թիվը	55/17	95/30	--
3.06	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթերը, քանակ	28/5	67/7	--
3.07	Արտահանման ծախքը (ԱՄՆ դոլար)	104/1731	100/1746	--
4.	**ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**109/2.6**	**106/2.7**	**92/3.1**
4.01	Արտահանման և ներմուծման համար կատարվող անօրինական վճարումները 1- 7 (լավագույնը)	116/2.6	115/2.6	95/3.3
4.02	Կոռուպցիայի ընկալման ինդեքս 0- 10 (լավագույնը)	92/2.7	84/2.9	74/3.0
5.	**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**55/4.4**	**69/3.6**	**65/3.7**
5.01	Օդանավակայանի խտությունը, թվաքանակ 1 մլն բնակչության հաշվով	59/0.7	60/0.7	56/0.7
5.02	Ուղեփոխադրումների կապվածության ինդեքս 0-100 (լավագույնը)	n/a	n/a	n/a
5.03	Սալարկված ճանապարհներ, ընդհանուրի մեջ %	30/89.0	27/90.0	1/100.0
	Ճանապարհային խցանումներ	--	n/a	n/a
5.04	Օդային տրանսպորտի ենթակառույցների որակը 1- 7 (լավագույնը)	69/4.5	78/4.2	80/3.9
5.05	Երկաթուղային ենթակառույցների որակը 1- 7 (լավագույնը)	86/1.9	79/1.8	76/1.9
5.06	Ճանապարհների որակը 1- 7 (լավագույնը)	68/3.6	71/3.2	68/3.1
5.07	Նավահանգստային ենթակառույցների որակը 1- 7 (լավագույնը)	110/2.9	103/2.7	94/2.8
6.	**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**36/4.3**	**50/3.8**	**89/3.1**
6.01	Մարդատար (լայներային) փոխադրումների կապվածության ինդեքս 0- 132.5 (լավագույնը)	n/a	n/a	n/a
6.02	Միջազգային բեռնափոխադրումների կազմակերպման դյուրինությունը և մատչելիությունը 1- 5 (լավագույնը)	111/2.4	115/2.0	113/2.0
6.03	Նյութատեխնիկական մատակարարման ոլորտի ապահովվածությունը 1- 5 (լավագույնը)	69/2.6	104/2.1	102/2.1
6.04	Միջազգային բեռնափոխադրումների ուղուն հետևելը (tracking) 1- 5 (լավագույնը)	115/2.3	102/2.2	100/2.2
6.05	Միջազգային բեռնափոխադրումների ժամանակին հասնելը նշանակված կետը 1- 5 (լավագույնը)	71/3.4	106/2.6	105/2.6
6.06	Փոստային ծառայությունների արդյունավետությունը 1- 7 (լավագույնը)	72/4.5	63/4.6	63/4.1
6.07	Ծառայությունների առևտրի հիմնական համաձայնագրի (GATS) դրույթների կիրառումը տրանսպորտի հատվածում 0- 1 (լավագույնը)	1/0.6	2/59.9	--

7.	**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**85/2.7**	**70/2.9**	**86/2.2**
7.01	Ֆիրմաների մակարդակով ինտերնետի օգտագործում 1- 7 (լավագույնը)	102/3.8	99/4.1	75/4.4
7.02	Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2008 թ.	51/100.0	71/62.5	106/10.5
7.03	Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2008 թ.	96/0.2	n/a	90/0.1
7.04	Ինտերնետից օգտվողների քանակը (100 մարդու հաշվով), 2008 թ.	102/6.2	97/5.7	91/5.7
7.05	Հիմնական հեռախոսային գծեր (100 մարդու հաշվով), 2008 թ.	60/2.3	n/a	56/19.7
7.06	Կառավարության առ-ցանց ծառայությունների ինդեքս 0- 1 (լավագույնը)	101/0.2	--	--
8.	**ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**96/3.4**	**91/3.5**	**47/4.6**
8.01	Մասնավոր սեփականության պաշտպանվածությունը 1- 7 (լավագույնը)	80/3.7	70/4.0	--
8.02	Բարոյականություն և կոռուպցիա 1- 7 (լավագույնը)	94/2.5	99/2.4	--
8.03	Դատական համակարգում և պետական պաշտոնյաների շրջանում անօրինական ազդեցություններ 1- 7 (լավագույնը)	110/2.6	104/2.5	--
8.04	Կառավարության արդյունավետություն 1- 7 (լավագույնը)	79/3.3	81/3.2	--
8.05	Տեղական մրցակցություն 1- 7 (լավագույնը)	106/3.8	104/3.8	--
8.06	Ֆինանսական շուկայի արդյունավետություն 1- 7 (լավագույնը)	101/3.1	--	--
8.07	Բացվածությունը օտարերկրյա կապիտալի մասնակցությանը 1- 7 (լավագույնը)	55/4.8	48/5.2	--
	Օտարերկրյա աշխատուժ վարձելու դյուրինություն 1- 7 (լավագույնը)	6/5.5	7/5.8	2/5.9
	Օտարերկրյա սեփականության համընդհանուր ընդունումը 1- 7 (լավագույնը)	91/4.4	77/4.9	69/5.0
	Օտարերկրյա ներդրումների օրենսդրության բիզնես ազդեցությունը 1- 7 (լավագույնը)	84/4.6	79/4.8	69/5.0
	Կապիտալի նկատմամբ վերահսկողությունը 1- 7 (լավագույնը)	54/4.7	53/5.0	--
	Բացվածությունը բազմակողմանի առևտրի կանոններին, ինդեքս 0- 100 (լավագույնը)	58/62.9	--	--
9.	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԻՆԴԵՔՍ**	**46/5.2**	**46/5.2**	**61/4.6**
9.01	Ոստիկանական ծառայությունների հուսալիությունը 1- 7 (լավագույնը)	97/3.4	84/3.6	82/3.6
9.02	Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը 1- 7 (լավագույնը)	20/5.8	28/5.7	32/5.4
9.03	Ահաբեկչության գործարար ծախքը 1- 7 (լավագույնը)	23/6.4	28/6.2	33/5.8

Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը առևտրի խթանման ոլորտում ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի 2010թ. գնահատականների (դիրքը աշխարհի 125 երկրների շարքում)

Աղյուսակ 3.

Առավելությունները	Դիրքը	Թույլ կողմերը	Դիրքը
ՇՈՒԿԱՅԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ – 9			
Թիրախային շուկաներում նախապատվությունների մարժան	5	Տեղական մաքսային դրույքների մեծագույն արժեքները	125
Մաքսերից ազատված (duty-free) ներմուծման տեսակարար կշիռը	28	Մաքսային դրույքների ցրվածքը	73
Մաքսային խոչընդոտներ (առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույք)	33	Մաքսային դրույքների բարդությունը	72
Կիրառվող միջին մաքսային դրույքը	45	Հատուկ մաքսային դրույքների քանակը	64
		Ներմուծման նկատմամբ կիրառվող առանձնահատուկ (distinct) մաքսային դրույքների քանակը	58
ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ – 84			
Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակ	28	Մաքսային գործընթացների բեռը	123
Մաքսային ծառայությունների ինդեքս	39	Արտահանման և ներմուծման համար կատարվող անօրինական վճարումները	116
Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակ	50	Մաքսազերծման արդյունավետությունը	109
		Ներմուծման ծախքը (ԱՄՆ դոլար)	107
		Արտահանման ծախքը (ԱՄՆ դոլար)	104
		Կոռուպցիայի ընկալման ինդեքս	92
		Ներմուծման վրա ծախսվող օրերի թիվը	64
		Արտահանման վրա ծախսվող օրերի թիվը	55
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ և ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ – 60			
Ծառայությունների առևտրի հիմնական համաձայնագրի (GATS) դրույթների կիրառումը տրանսպորտի հատվածում	1	Միջազգային բեռնափոխադրումների ուղուն հետևելը (tracking)	115
Սալարկված ճանապարհներ, ընդհանուրի մեջ %	30	Միջազգային բեռնափոխադրումների կազմակերպման դյուրինությունը և մատչելիությունը	111
		Նավահանգստային ենթակառույցների որակը	110
		Ֆիրմաների մակարդակով ինտերնետի օգտագործում	102
		Ինտերնետից օգտվողների քանակը (100 մարդու հաշվով),	102

		2008թ.	
		Կառավարության առ-ցանց ծառայությունների ինդեքս	101
		Լայնաշերտ ինտերնետի բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2008 թ.	96
		Երկաթուղային ենթակառույցների որակը	86
		Փոստային ծառայությունների արդյունավետությունը	72
		Միջազգային բեռնափոխադրումների ժամանակին հասնելը նշանակված կետը	71
		Օդային տրանսպորտի ենթակառույցների որակը	69
		Նյութատեխնիկական մատակարարման ոլորտի ապահովվածությունը	69
		Ճանապարհների որակը	68
		Հիմնական հեռախոսային գծեր (100 մարդու հաշվով), 2008 թ.	60
		Օդանավակայանի խտությունը, թվաքանակ 1 մլն բնակչության հաշվով	59
		Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2008 թ.	51
ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ – 65			
Օտարերկրյա աշխատուժ վարձելու դյուրինությունը	6	Դատական համակարգում և պետական պաշտոնյաների շրջանում անօրինական ազդեցությունները (միջամտությունները)	110
Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը	20	Տեղական մրցակցություն	106
Ահաբեկչության գործարար ծախքը	23	Ֆինանսական շուկայի արդյունավետություն	101
		Ոստիկանական ծառայությունների հուսալիությունը	97
		Բարոյականություն և կոռուպցիա	94
		Օտարերկրյա սեփականության համընդհանուր ընդունումը	91
		Օտարերկրյա ներդրումների օրենսդրության բիզնես ազդեցությունը	84
		Մասնավոր սեփականության պաշտպանվածությունը	80
		Կառավարության արդյունավետություն	79
		Բացվածությունը բազմակողմանի առևտրի կանոններին, ինդեքս	58
		Բացվածությունը օտարերկրյա կապիտալի մասնակցությանը	55
		Կապիտալի նկատմամբ վերահսկողությունը	54

«Համաշխարհային առևտրի խթանում» ինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2010թ. (աշխարհի 125 երկրների շարքում)

Աղյուսակ 4.

Երկներ	**Առևտրի խթանման ինդեքս**		այդ թվում							
			Շուկայի մատչելիության ենթաինդեքս		**Մաքսային վարչարարության ենթաինդեքս**		**Տրանսպորտի և կապի ենթակառույցների ենթաինդեքս**		**Բիզնես միջավայրի ենթաինդեքս**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Էստոնիա	23	4.90	83	3.83	11	5.74	31	4.70	23	5.31
Սլովենիա	35	4.68	88	3.78	27	5.16	29	4.76	29	5.00
Վրաստան	37	4.59	5	5.43	37	4.78	74	3.49	45	4.64
Լիտվա	41	4.48	70	3.97	38	4.73	34	4.63	52	4.58
Չեխիա	42	4.47	105	3.71	32	4.87	36	4.61	43	4.68
Մոնտենեգրո	43	4.47	24	4.86	55	4.19	55	3.87	33	4.96
Խորվաթիա	45	4.45	28	4.77	60	4.11	38	4.53	63	4.39
Լատվիա	46	4.39	80	3.87	40	4.64	39	4.44	50	4.60
Սլովակիա	47	4.36	103	3.72	49	4.50	32	4.69	56	4.53
Հունգարիա	49	4.30	108	3.68	34	4.83	41	4.14	54	4.56
Հայաստան	52	4.24	9	5.33	84	3.52	60	3.78	65	4.31
Ռումինիա	54	4.18	82	3.85	43	4.59	59	3.81	57	4.49
Մակեդոնիա	56	4.16	38	4.62	75	3.77	50	3.97	67	4.29
Լեհաստան	58	4.16	93	3.77	42	4.61	51	3.97	68	4.28
Ալբանիա	59	4.13	21	4.96	59	4.11	87	3.25	73	4.22
Սերբիա	67	3.98	42	4.53	64	4.06	76	3.47	89	3.85
Ադրբեջան	77	3.88	61	4.20	105	3.13	70	3.58	49	4.62
Բուլղարիա	78	3.87	76	3.90	72	3.88	49	4.00	99	3.68
Բոսնիա-Հերցոգ.	80	3.85	44	4.50	90	3.42	75	3.48	84	3.99
Ուկրաինա	81	3.84	30	4.76	106	3.12	71	3.56	86	3.90
Ղազախստան	88	3.74	53	4.35	121	2.46	44	4.13	80	4.04
Ղրղզստան	100	3.58	20	5.00	115	2.76	94	3.12	112	3.44
Տաջիկստան	108	3.43	66	4.12	122	2.41	96	3.05	77	4.13
Ռուսաստան	114	3.37	125	2.68	109	2.98	48	4.00	92	3.79

Շուկայի մատչելիության ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2010թ. (աշխարհի 125 երկրների շարքում)

Աղյուսակ 5.

Ե ր կ ր ն ե ր	**Շուկայի մատչելիության ենթաինդեքս**		այդ թվում			
			Տեղական շուկայի մատչելիություն		**Օտարերկրյա շուկաների մատչելիություն**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Վրաստան	5	5.43	3	6.10	32	4.09
Հայաստան	9	5.33	17	5.56	15	4.88
Ղրղզստան	20	5.00	33	5.16	19	4.68
Ալբանիա	21	4.96	4	6.10	78	2.67
Մոնտենեգրո	24	4.86	18	5.53	53	3.52
Խորվաթիա	28	4.77	25	5.40	54	3.51
Ուկրաինա	30	4.76	26	5.32	48	3.63
Մակեդոնիա	38	4.62	46	5.00	38	3.88
Սերբիա	42	4.53	48	4.99	49	3.63
Բոսնիա-Հերցոգ.	44	4.50	40	5.06	55	3.37
Ղազախստան	53	4.35	52	4.92	61	3.20
Ադրբեջան	61	4.20	70	4.66	59	3.29
Տաջիկստան	66	4.12	61	4.77	75	2.81
Լիտվա	70	3.97	56	4.83	90	2.23
Բուլղարիա	76	3.90	65	4.74	90	2.23
Լատվիա	80	3.87	69	4.68	90	2.23
Ռումինիա	82	3.85	71	4.65	90	2.23
Էստոնիա	83	3.83	72	4.63	90	2.23
Սլովենիա	88	3.78	75	4.56	90	2.23
Լեհաստան	93	3.77	78	4.54	90	2.23
Սլովակիա	103	3.72	89	4.47	90	2.23
Չեխիա	105	3.71	90	4.45	90	2.23
Հունգարիա	108	3.68	92	4.40	90	2.23
Ռուսաստան	125	2.68	125	2.59	72	2.86

Մաքսային վարչարարության ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2010թ. (աշխարհի 125 երկրների շարքում)

Աղյուսակ 6.

Ե ր կ ր ն ե ր	**Մաքսային վարչարարության ենթաինդեքս**		այդ թվում					
			Մաքսային վարչարարության արդյունավետությունը		**Ներմուծման-արտահանման գործընթացների արդյունավետությունը**		**Մաքսային վարչարարության հրապարակայնությունը**	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Էստոնիա	11	5.74	9	5.81	7	6.10	24	5.30
Սլովենիա	27	5.16	14	5.62	67	4.62	25	5.23
Չեխիա	32	4.87	23	5.36	41	5.11	45	4.15
Հունգարիա	34	4.83	16	5.49	53	4.83	44	4.16
Վրաստան	37	4.78	31	4.95	38	5.21	42	4.18
Լիտվա	38	4.73	39	4.67	34	5.28	40	4.26
Լատվիա	40	4.64	45	4.45	27	5.43	50	4.02
Լեհաստան	42	4.61	58	4.20	37	5.23	38	4.38
Ռումինիա	43	4.58	32	4.82	48	4.95	51	4.01
Սլովակիա	49	4.50	25	5.14	81	4.33	49	4.04
Մոնտենեգրո	55	4.19	74	3.89	49	4.94	54	3.74
Ալբանիա	59	4.11	49	4.36	62	4.71	73	3.27
Խորվաթիա	60	4.11	54	4.25	74	4.49	59	3.57
Սերբիա	64	4.06	64	4.12	68	4.62	68	3.44
Բուլղարիա	72	3.88	63	4.15	83	4.30	77	3.19
Մակեդոնիա	75	3.77	108	2.87	59	4.76	58	3.68
Հայաստան	84	3.52	76	3.86	89	4.11	109	2.60
Բոսնիա-Հերցոգ.	90	3.42	106	2.90	58	4.77	108	2.60
Ադրբեջան	105	3.13	38	4.69	123	1.78	87	2.92
Ուկրաինա	106	3.12	110	2.86	98	3.78	102	2.72
Ռուսաստան	109	2.99	85	3.61	110	2.87	115	2.50
Ղրղզստան	115	2.76	81	3.79	116	2.19	123	3.29
Ղազախստան	121	2.46	103	2.97	125	1.37	81	3.03
Տաջիկստան	122	2.41	114	2.77	124	1.57	89	2.89

Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառույցների ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2010թ. (աշխարհի 125 երկրների շարքում)

Աղյուսակ 7.

Երկրներ	Տրանսպորտի և կապի ենթակառույցների ենթաինդեքս		այդ թվում					
			Տրանսպորտային ենթակառույցների մատչելիությունը և որակը		Տրանսպորտային ծառայությունների մատչելիությունը և որակը		Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիությունը և օգտագործումը	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Սլովենիա	29	4.76	22	5.44	41	4.18	28	4.66
Էստոնիա	31	4.70	51	4.61	37	4.25	19	5.24
Սլովակիա	32	4.69	31	5.13	20	4.96	42	3.97
Լիտվա	34	4.63	30	5.16	44	4.10	29	4.64
Չեխիա	36	4.61	48	4.71	27	4.61	31	4.51
Խորվաթիա	38	4.53	34	5.07	48	4.09	34	4.42
Լատվիա	39	4.44	29	5.20	45	4.10	41	4.02
Հունգարիա	41	4.14	88	3.53	30	4.43	32	4.47
Ղազախստան	44	4.13	35	5.03	47	4.09	61	3.26
Ռուսաստան	48	4.00	52	4.53	70	3.62	44	3.86
Բուլղարիա	49	4.00	66	4.13	62	3.81	39	4.06
Մակեդոնիա	50	3.97	54	4.42	55	3.96	52	3.53
Լեհաստան	51	3.97	87	3.56	34	4.31	40	4.03
Մոնտենեգրո	55	3.87	60	4.23	96	3.16	38	4.22
Ռումինիա	59	3.81	85	3.63	46	4.10	48	3.70
Հայաստան	60	3.78	55	4.42	36	4.25	85	2.68
Ադրբեջան	70	3.58	73	3.87	52	3.99	75	2.88
Ուկրաինա	71	3.56	69	4.06	93	3.22	55	3.39
Վրաստան	74	3.49	71	4.00	65	3.79	84	2.69
Բոսնիա-Հերցոգ.	75	3.48	98	3.28	56	3.95	64	3.21
Սերբիա	76	3.47	102	3.21	58	3.93	60	3.26
Ալբանիա	87	3.25	100	3.23	69	3.64	77	2.87
Ղրղզստան	94	3.12	90	3.49	84	3.35	91	2.51
Տաջիկստան	96	3.05	84	3.63	80	3.42	103	2.08

Գործարար միջավայրի ենթաինդեքսի բաղկացուցիչների գնահատականները նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում՝ գնահատված Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2010թ. (աշխարհի 125 երկրների շարքում)

Աղյուսակ 8.

Ե ր կ ր ն ե ր	Բիզնես միջավայրի ենթաինդեքս		այդ թվում			
			Կանոնակարգումների միջավայրը		Ֆիզիկական անվտանգությունը	
	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր	Տեղ	Միավոր
Էստոնիա	23	5.31	27	4.66	19	5.96
Սլովենիա	29	5.00	41	4.30	26	5.71
Մոնտենեգրո	33	4.96	45	4.21	27	5.70
Չեխիա	43	4.68	52	3.99	39	5.38
Վրաստան	45	4.64	66	3.76	34	5.52
Ադրբեջան	49	4.62	49	4.08	51	5.16
Լատվիա	50	4.60	63	3.78	38	5.42
Լիտվա	52	4.58	70	3.72	37	5.44
Հունգարիա	54	4.56	68	3.74	40	5.38
Սլովակիա	56	4.53	59	3.87	49	5.19
Ռումինիա	57	4.49	74	3.62	41	5.37
Խորվաթիա	63	4.39	90	3.44	42	5.33
Հայաստան	65	4.31	96	3.40	46	5.22
Մակեդոնիա	67	4.29	73	3.62	57	4.96
Լեհաստան	68	4.28	61	3.82	74	4.74
Ալբանիա	73	4.22	85	3.50	59	4.95
Տաջիկստան	77	4.13	92	3.44	68	4.82
Ղազախստան	80	4.04	83	3.52	82	4.57
Բոսնիա-Հերցոգ.	84	3.99	118	2.86	53	5.12
Ուկրաինա	86	3.90	117	2.93	64	4.87
Սերբիա	89	3.85	102	3.25	86	4.45
Ռուսաստան	92	3.79	110	3.14	87	4.43
Բուլղարիա	99	3.68	101	3.30	97	4.06
Ղրղզստան	112	3.44	113	3.04	103	3.85